



ՀՀ Արարատի մարզի հ. Լանջազատ /Զովաշեն/
Հեռ. (Тел.) 091-58-28-87

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԼԱՆՋԱԶԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ
ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

2018 թվականի հուլիսի 4 – ին Լանջազատի գյուղական համայնքում տեղի ունեցավ համրային լսում: Նախագահում էր համայնքի ղեկավար Հ. Հակոբջանյանը, քարտուղարում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ա. Մելքոնյանը:

Մասնակցում էին Արարատի մարզպետարանի ներկայացուցիչ Հ. Դանիելյանը, ավագանու անդամների, համայնքապետարանի աշխատակազմը, մշակույթի տան, գրադարանի աշխատակիցները, համայնքի ընտանեկան բժշկուհին և բուժքույրը, հանրակրթական դպրոցի տնօրենը, ինչպես նաև համայնքի բնակիչները:

ԼՍԵՑԻՆ -- Արարտի մարզի Լանջազատ համայնքի ղեկավար Հ. Հակոբջանյանի հաշվետվությունը 2018 թ. առաջին կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ:

ԱՐԶԱՆԱԳՐՎԵՑ, որ

2018թ. առաջին կիսամյակի ընթացքում Լանջազատի գյուղական համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

համայնքապետի և ավագանու անդամների կողմից արձանագրվել է 278 ընդունելություն: Ընդունելությունների ընթացքում բարձրացված խնդիրները քննարկվել են համայնքի համայնքապետարանի աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ և տրվել են համապատասխան լուծումներ:

Համայնքապետարանը բնակիչներին տրամադրել է շուրջ 108 տեղեկանք, ստացել 165 - ից ավել պաշտոնական նամակ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, դրանք քննարկվել են սահմանված ժամկետներում, տրվել պատասխաններ:

2018թ. առաջին կիսամյակի ընթացքում համայնքի վարչական տարածքում պարբերաբար իրականացվել են սանմաքրման աշխատանքներ, մաքրվել են ոռոգման ջրատարները և համայնքում գտնվող, կարևոր նշանակություն ունեցող կամուրջները:

Ամիսը 4 անգամ կատարվում է աղբահանություն:

Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափազրման, սահմանների ճշտորման և հողատեսքերի փոփոխման և ձևակերպման աշխատանքներ:

2018թ. առաջին կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտները ըստ հետևյալ հարկատեսակների կազմել են՝

ա / հողի հարկ՝ 800.0 հազար դրամ.

բ / գույքահարկ որից՝ շենք և շինություններ – 120.0 հազար դրամ, ավտոմեքենաներ – 2152.0 հազար դրամ

գ / տեղական տուրք՝ 50.0 հազար դրամ

դ / ոչ հարկային եկամուտներ՝ 225.0 հազար դրամ

ե / աղբահանություն՝ 540.0 հազար դրամ

Համայնքում իրականացվել են մի շարք միջոցառումներ.

Հանդիսավորությամբ նշվել է հունվարի 28-ը՝ ազգային բանակի օրը, նշվել է կանանց միջազգային տոնը՝ մարտի 8 – ը, համայնքապետարանի կողմից նվերներ են տրամադրվել Լանջազատի միջնակարգ դպրոցում, մախակերթարանում, մարզադպրոցում, բուժամբուլատորիայում և համայնքապետարանում աշխատող բոլոր կանանց և աղջիկներին:

Ապրիլի 22-ին համայնքում կատարվեց Գրիգոր Նարեկացի եկեղեցու հիմնօրհները: Համայնքի քնակիչների և հյուրերի մոտ՝ 500 հոգու համար կազմակերպվեց մատաղի հյուրասիրություն: Միջոցառմանը ասնուրով և հայրենասիրական երգերով հանդես եկան Լանջազատ համայնքի մշակույթի տանը գործող « Ասմունքի խմբակի » սաները, ինչպես նաև « Ջովաշեն » պարային համույթը: Մայիսի եռատոնի կապակցությամբ մարզադպրոցում կազմակերպվել է Չյուդոյի հանրապետական 3-րդ հուշանրցաշար նվիրված՝ ազատամարտի վեներան Ռոբերտ Հակոբջանյանի հիշատակին: Մասնակիցներին տրվել է պատվոգրեր և մեդալներ, հաղթողներին նաև գավաթներ, կազմակերպվել է մեծ հյուրասիրություն:

Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է 970.0 հազար դրամ ֆինանսական աջակցություն:

Հուղարկավորության նպատո՝ 140.0 հազար դրամ

Համայնքում նախադպրոցական դաստիարակությունը պատշաճ կազմակերպելու համար հատկացվել է 465.0 հազար դրամ.

Աղբահանման աշխատանքների կազմակերպման համար հատկացվել է 900.0 հազար դրամ.

2018թ. 2-րդ կիսամյակում նախատեսված է մի շարք միջոցառումներ և տոնակատարություններ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿՆՎԱՐ



Հ. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ